ԿԱՐԻՆԵ ՇԱԳԻԴԱՆՈՎԱ

ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Համքարությունների գոյությունն ու գործունեությունը Հայաստանում հայտնի է միջնադարից: Գիտականորեն հաստատված է, որ վաղ միջնադարում համքարությունները հայտնի են եղել "Կտրիճավորաց եղբայրություններ" անվամբ[1]: Իբրև նույն արհեստով զբաղվողների համախումբ կազմակերպություն՝ նրանք կոչված են եղել կարգավորել արտադրության գործընթացը, պատրաստի արտադրանքի իրացումը, հումքի մատակարարումը, արտադրանքի որակն ու արտադրությանը հարակից այլ հարցերը հսկելը: Միաժամանակ համքարությունները որոշակի կանոնակարգված փոխհարաբերություններ են մշակել նույն արհեստով զբաղվող անհատների միջև, փոխհարաբերություններ, որոնք կրել են տնտեսական, կրոնական ու էթիկական բնույթ: Համքարությունները գործելու սկզբնական շրջանում առաջնորդվել են սովորույթի ուժով ավանդված, չգրված օրենքներով: Ավելի ուշ՝ 18-րդ դարում նշված սովորույթային օրենքները համակարգվեցին, ամբողջական տեսքով "Կանոնագիր" անվամբ փոխանցվեցին սերնդե սերունդ[2]: Անդրկովկասը Ռուսաստանին միացվելուց հետո "Կանոնագրերը" պարտադիր կերպով գրանցման ենթարկվեցին պետական մարմիններում: 1865թ. Թիֆլիսի համքարների բողոքի ելույթից հետո իշխանությունների հսկողությունը համքարությունների նկատմամբ ավելի խստացավ[3]:

Ներկայացվող հաղորդումը նվիրված է 19-րդ դարում և 20-ի առաջին տասնամյակներում Անդրկովկասի հայաբնակ քաղաքներում գործող համքարությունների "Կանոնագրերի" և Արևելյան Հայաստանում նոր ձևավորվող արհեստակցական միությունների կանոնադրությունների համեմատական քննությանը: Բնականաբար քննության տեսադաշտում են եղել գերազան-

---

[1] Աբրահամյան Վ., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Երևան, 1971, էջ7, Սեղբոսյան Կ., Արհեստակցական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում (Հայ ազգագրություն և բանահյուսություն, պ. 6), Երևան, 1974, էջ 160:
[2] Աբրահամյան Վ., նշվ. աշխ., էջ 205 (Կանոնագիր):
[3] Աբրահամյան Վ., նշվ. աշխ. էջ 205, Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 6, երևան 1980, էջ 120, Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 262:

ցապես Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքները, որոնք հիշյալ ժամանակամիջոցում աչքի էին ընկնում իբրև արհեստագործության կենտրոններ, թեև ավելի սահմանափակ թվով արհեստներով զբաղվել են Արևելյան Հայաստանի բոլոր բնակավայրերում (Նոր Բայազետ, Օրդուբադ, Դիլիջան, Նախիջևան, Շուշի, Ղարաքիլիսա, Կարս և այլն):

Երևանում 20-րդ դարի սկզբներին ոչ լրիվ տվյալներով գործել են 19 համքարություն, որ ներկայացրել է հետևյալ արհեստները.
ատաղձագործներին, մաշկակարներին, կաշեգործներին, դարբիններին, ներկարարներին, քարտաշներին, ոսկերիչներին, գդակակարներին, դերձակներին, վարսավիրներին և այլն[1]:

Ըստ Թ.Հակոբյանի, 1901թ. տվյալներով Երևանում գոյություն են ունեցել 15 արհեստներ, ըստ որում վերը նշված թվարկման մեջ որոշ արհեստներ բացակայում են (թամբագործություն, զինագործություն և այլն) և ընդհանրապես[2]:

Ալեքսանդրապոլում ևս համքարությունները գործել են մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները[3]: 19-րդ դարի 60-ական թվականներին Ալեքսանդրապոլում զբաղվել են ավելի քան 36 արհեստով[4], գործել են.
մանրավաճառներ, մրգավաճառներ, մաշկակարներ, խանութպաններ, պարանագործներ, քարտաշներ, կաշեգործներ, ներկարարներ, հյուսներ, դերձակներ (ասիական), գլխարկ կարողներ, գզրարներ, հացագործներ և այլն:

19-րդ դարի 80-90-ական թվականներին Անդրկովկասում, այդ թվում Արևելյան Հայաստանում սկսեցին ձևավորել և զարգանալ կապիտալիստական հարաբերությունները: Ընդլայնվեցին հին փոքրածավալ ձեռնարկությունները, հատկապես պղնձարդյունաբերության, որ կենտրոնացված էր Ալավերդում ու Կապանում, կոնյակի, գինու, սպիրտի արտադրությունը Երևանում, ստեղծվեցին նոր ձեռնարկություններ[5]: Երկաթուղային ճանապարհների շինարարությունը զարկ տվեց առևտրին. օգտագործվող ապրանքների զգալի մասը ներմուծվում էր դրսից: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը բացասաբար անդրադարձավ տնայնագործության, արհեստագործության վրա: Մի շարք արհեստներ վերացան, չդիմանալով ֆաբրիկա-գործարանային

---

[1] Շահազիզ Երվ., Հին Երևանը, Երևան, 2003, էջ 99-100. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թ.թ.), Երևան, 1963, էջ 91-93:
[2] Նույն տեղում
[3] Սեղբոսյան Կ., նշվ. աշխ., էջ 175:
[4] Աբրահամյան Վ., նշվ. աշխ., էջ 60, նաև Սեղբոսյան Կ., նշվ. աշխ., էջ 182:
[5] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 265-267:

էժանագին արտադրանքի մրցակցությունը: Վերացան նաև տվյալ արհեստի համքարությունները: "Բայց և այնպես համքարությունները քայքայման էին դատապարտված, աստիճանաբար զարգանում էր կապիտալիստական արտադրության եղանակը",[1]- հիմնականում ճիշտ եզրակացությունը որոշ լրացման կարիք ունի: Բանն այն է, որ "աստիճանաբար" տվեց ավելի քան կես դար:

Անդրկովկասում, մասնավորապես հայկական քաղաքներում արդյունաբերության մեջ ընդգրկված բանվորությունն օրստօրե դառնում էր բազմամարդ: Գործատուների և աշխատողների միջև ծագում էին լուծում պահանջող խնդիրներ, հատկապես աշխատողների շրջանում հաճախ էին երևան գալիս գործատուների դեմ ուղղված բողոքի ու դժգոհության տրամադրություններ: Անհրաժեշտաբար կարիք էր զգացվում միավորվելու, համախմբվելու, քանզի միասնական ուժերով հարցերը լուծելը ավելի հեշտ էր: Եվրոպայում ձևավորվել ու գործում էին արհեստակցական միությունները, Ռուսաստանի բանվորությունը նույնպես կանգնած էր այդ ուղու վրա: Անդրկովկասում նոր-նոր ձևավորվող քաղաքական կազմակերպությունները փորձում էին տեղում կիրառել եվրոպական, գերազանցապես ռուսական փորձը, իրենց հսկողության շրջանակների մեջ վերցնել բանվորներին, ծառայեցնել իրենց քաղաքական նպատակներին: Այդ բանը նրանց հաջողվում էր մասամբ: Ուշագրավ է այդ առումով նշանավոր կուսակցական գործիչ Ա.Մռավյանի հետևյալ միտքը. "1905 թվի հեղափոխության փոթորիկը, որպես այդպիսին, չի ապրել ռուսական կայսրության ծայրագույն անկյուն Երևանի նահանգը: Երևանի նահանգի բանվորներն ու գյուղացիները՝ հեղափոխության այդ շարժիչ ուժերը կազմակերպված հեղափոխական պայքար չեն մղել միապետության դեմ[2]:

Անդրկովկասում տակավին գործում էին համքարությունները, թեև մի մասը կազմալուծվել էր, սակայն արևելյան կենցաղի բնույթը պահանջում էր յուրահատուկ ապրանքների տեսականի, որի ֆաբրիկա-գործարանային արտադրությունը չկար: Ասպարեզ եկան նաև նոր արհեստներ (ասիական դերձակներին, կոշկակարներին զուգահեռ եվրոպական և այլն) իրենց համքարություններով: Ինչպես վերն արդեն նշել ենք, Արևելյան Հայաստանի քաղաքներում համքարությունները գոյատևել են մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, թե իբրև

---

[1] Նույն տեղում, էջ 263:
[2] Մռավյան Ա., Հոդվածների, հիշողությունների ժողովածու, Երևան, 1930, էջ 28: (Ըստ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 235):

1906 թվականներին Երևանում գործել են 10-11 արհմիություն[1]: Թ.Հակոբյանը թվարկում է դրանցից մի քանիսը. "գինագործներ, կաշեգործներ, այգեգործներ, Սարաջյանի գործարանի բանվորները և ուրիշներ"[2]: Մեզ չհաջողվեց ՀՀ ազգային արխիվում հայտնաբերել այդ թվականներին վերաբերող որևէ վավերագիր, որ կհաստատեր Թ.Հակոբյանի և Ա.Վարդապետյանի կարծիքները, որոնք հենվում են հին կուսակցական գործիչների հիշողությունների վրա: Կարծում ենք, որ նրանք պարզապես տուրք են տվել դարաշրջանի ոգուն ժամանակի պահանջներին: Ինչ վերաբերում է բողոքի ցույցերին, գործադուլներին, ապա համքարությունները ևս դիմում էին այդ գործողություններին:

Կապիտալիստական արտադրական հարաբերություններում ձևավորվող բանվորությունը, որ մի զգալի մասը կազմում էին նախկին արհեստավորները, իր արհեստակցական կազմակերպությունն ստեղծելիս առաջնորդվել է գոյություն ունեցող, գործող նմանաբնույթ կազմակերպության համքարության "Կանոնագրի"սկզբունքներով, ավանդույթներով: Մի իրողություն, որն ակնհայտ է դառնում մեր ձեռքի տակ գտնվող նյութերի համեմատությունից:[3]

Երկու կազմակերպություններն էլ.

1. ընդգրկում են միևնույն արհեստի, մասնագիտության պատկանող աշխատողների, որոնք մուծում են մուտքի վճար և ամենամսյա անդամավճար.
2. հետապնդել են տնտեսական նպատակներ. քաղաքական խնդիրները հարուցվել են ավելի ուշ և առանձին դեպքերում:
3. ունեցել են ղեկավար մարմին, որն ընտրվել է անդամների ընդհանուր ժողովում, որոշակի ժամկետով, մարմինը բաղկացած է եղել 2-4 հոգուց, գլխավորը

---

[1] Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 245, Վարդապետյան Ա.Վ., Հայաստանի արհմիությունների պատմություն, Երևան, 1969թ. էջ 15:
[2] Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 245:
[3] Համքարության վերաբերյալ որոշ փաստերի և "Կանոնագրերի" համար աղբյուր է հանդիսացել Վ.Աբրահամյանի "Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում" մեծարժեք աշխատությունը, Երևան, 1971: "Կանոն ոսկերիչ արհեստավորաց", Աբրահամյան Վ., նշվ. աշխ., էջ 200-209, "Թիֆլիսի արհեստավորական համքարությունների կանոնագիր", 1867, էջ 238-247, Թոփչյան Է., "Արհեստակցական միություններ", Թիֆլիս, 1906, "Կանոնադրություն Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միության", Թիֆլիս, 1907, "Երևանի մասնավոր տներում և ձեռնարկություններում ստորին ծառայողների արհմիություն", Հայաստանի ազգային արխիվ, ֆ. Պ119, "ՀՀ Կառավարական հիմնարկների ծառայողների արհմիություն", ֆ. Պ203, գ. 78, թ. 1-9, "Ղեղագործների, նրանց աշակերտների, պրակտիտանտների, դեղատների բոլոր ծառայողների արհմիության ժամանակավոր կանոնադրություն", 1919թ., ֆ. Պ201, գ. 563, թ. 347 և այլն:

համքարությունում կոչվել է ուստաբաշի. նրա խորհրդականները՝ աղսախկալներ, արհմիության պարագայում՝ նախագահ, տեղակալ և անդամներ. որոշումներն ընդունվել են ոչ միանձնյա, այլ համաձայնությամբ.

4. ունեցել են գանձարկղ, ընտրովի գանձապետ. գանձարկղի եկամուտը ծախսվել է անդամների կարիքները հոգալու նպատակով, հատկապես ուշադրություն է դարձվել հիվանդների, ծերերի, որբերի վրա. գանձապետի մատյանն ստուգվել է ընդհանուր ժողովի կողմից.

5. ունեցել են իրենց անդամների ցուցակները, որը վարում էր ուստաբաշին – նախագահը հատուկ մատյաններում.

6. ունեցել են իրենց կնիքը.

7. իրավասու էին իշխանություններին ներկայացնել իրենց պահանջները.

8. քննել և լուծում են տվել իրենց անդամների միջև ծագած վեճերին, կողմնակի անձանց գանգատները, բացի քրեական բնույթի խնդիրները.

9. հսկել են իրենց անդամների բարոյական վարքագծին, իրենց շարքերից իրավունք ունեին վտարելու անբարոյական արարքներ, տարաբնույթ զանցանքներ կատարած անդամներին:

Թվարկած ընդհանրություններին կարելի է հավելել մասնավոր կարգի այլևայլ ընդհանրություններ, կարծում ենք, որ այդքան էլ բավարար հիմք է տալիս ասելու, որ Հայաստանի արհմիությունները իրենց կազմավորման սկզբնական փուլում՝ 20-րդ դարի սկզբներին օգտագործել են համքարությունների կազմակերպական սկզբունքները: